ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝ [illegible]

Տնօրեն [illegible] 20 23 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Արմավիրի մարզի [illegible]

[illegible] Արմավիրի [illegible] N4 [illegible] դպրոց [illegible]

ուսումնական հաստատության անվանումը, համարը

[illegible] դաս. [illegible]

դասարանի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը

2023 - 2024 ուսումնական տարի

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթաց քում Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դաս արանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, ո րոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերու թյունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգա պահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնու թյուն) :

1Հոգևոր դաստիարակություն Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմակ ան ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

2 Գեղագիտական դաստիարակություն Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կ արծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագի տական ճաշակ:

3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Հայրենասիրության կրթության վ երաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների անուներ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռ ազմարվեստ ձևերը:

4 Ֆիզիկական դաստիարակություն Դասապրոցեսին պետք է ցուցաբերոլ ակտիվ ություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրա ստությանը: Կոձեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցո վ:

5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը ր աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

6Բնապահպանական դաստիարակություն Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:

7 Դպրոց-
ընտանիք կապը Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մ եջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ սովորեն:

Աշխատանքի բովանդակությունը	ժամկետ	կատարող

1. Աշխատանքային պլանի կազմում Դասագրքերի բաշխում Դասասենյակի կահավորում	օգոստոս	Դասվար Գրադանավար
2. Գիտելիքի օր։	սեպտեմբեր	դասվար
3. Զրույց՝ «Ես դպրոցական եմ»	սեպտեմբեր	դասվար
4. Զրույց՝ «Իմ հայրենիք» թեմայով	սեպտեմբեր	դասվար
5. Զրույց՝ «Իմ ուսուցիչը» թեմայով	սեպտեմբեր	դասվար
6. Զրույց՝ « Իմ քաղաքի տոնը» թեմայով	հոկտեմբեր	դասվար
7. Զրույց«Երթևեկության կանոններ» թեմայով	հոկտեմբեր	դասվար
8. Զրույց «Աշնան գույներ» թեմայով	հոկտեմբեր	դասվար
9. Զրույց՝ «Մենք խաղաղություն ենք ուզում»	նոյեմբեր	դասվար
10. Զրույց՝ «Սուր վարակիչ հիվանդություններ»	նոյեմբեր	Դասվար բուժքույր
11.Զրույց՝ «Ընկերություն, բարեկամություն, նվիրում» թեմայով	նոյեմբեր	դասվար
12.Զրույց՝ «Առողջ ապրելակերպ»	նոյեմբեր	դասվար
13. Զրույց՝ «Երթևեկության կանոններ» թեմայով	դեկտեմբեր	դասվար
14. Զրույց՝ «Օգնենք ձմեռող թռչուններին»	դեկտեմբեր	դասվար
15. Զրույց «Ինչպես դիմավորել Ամանորը» թեմայով	դեկտեմբեր	դասվար
16. Զրույց՝«Հայոց բանակի օր»	հունվար	դասվար
17. Զրույց «Տիառնընդառաջ»	փետրվար	դասվար
18. Զրույց՝ «Նվիրի՛ր գիրք», Հովհ. Թումանյան	փետրվար	դասվար
19. Զրույց՝«Անաղարտ պահենք մեր սուրբ լեզուն»	փետրվար	դասվար
20. Զրույց՝«Կանանց միջազգային օր» թեմայով	մարտ	դասվար
21. Զրույց՝«Կանաչ գարուն» թեմայով	մարտ	դասվար
22. Զրույց՝«Առողջ մարմնում՝ առողջ հոգի»	մարտ	դասվար
23. Զրույց՝ «Երթևեկություն» թեմայով	ապրիլ	դասվար

24. Սուրբ Զատիկ	ապրիլ	դասվար
25.Ցեղասպանության զոհերի հիշատակի օր	ապրիլ	դասվար
26. Զրույց աշխատանքի, մասնագիտությունների մասին	ապրիլ	դասվար
29. Համագործակցում: Պատմության քննարկում	մայիս	դասվար
30.Զրույց՝ «Աշխատանքը բարիք է»	մայիս	դասվար
31. Էքսկուրսիա	մայիս	դասվար

Դասղեկի գործառույթները

Դաստիարակչական աշխատանքներ իրականացնելու ընթացքում դասղեկը կատարում է՝

• աշակերտների մանկավարժահոգեբանական հետազոտություն (մանկավարժահոգեբանական ախտորոշում),

• կրթության գործընթացում դասարանական կոլեկտիվի փոխհարաբերությունների՝ (փոխհարաբերություններ աշակերտների միջեւ, աշակերտների եւ ուսուցիչների միջեւ, ներդասարանական, միջդասարանական փոխհարաբերություններ) վերլուծություն, համակարգում, կարգավորում,

• դասարանական կոլեկտիվի կենսագործնեության փուլերի (կիսամյակ եւայլն) եւ միջոցառումների (դասղեկական ժամեր, տեղեկատվական րոպեներ, ստեղծագործական միջոցառումներ, ցուցահանդեսներ եւ այլն) պլանավորում, նախապատրաստում, իրականացում, արդյունքների ամփոփում, վերլուծություն,

• սովորողների սոցիալական պաշտպանություն, (ցանկալի է սոցիալական մանկավարժի հետ համատեղ),

• աշխատանք ծնողների հետ

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրությունը

Ուսումնական տարվա սկզբին

• Կազմում է աշակերտների ցուցակը եւ ձեւավորում դասամատյանը (սեպտեմբեր, առաջին շաբաթ):

• Կազմակերպում է դասագրքերի ստացումը գրադարանից (սեպտեմբեր, առաջին

շաբաթ):

• Ուսումնասիրում է աշակերտների ընտանեկան դաստիարակության պայմանները (առաջին քառորդ):

• Վերստուգում կամ պատրաստում է դասարանի սոցիալական անձնագիրը եւ հանձնում է սոցիալական մանկավարժին (առաջին քառորդ):

• Հավաքում է սպառիչ տեղեկություններ՝ լրացուցիչ կրթության հաստատություններում, դասարանի աշակերտների մասնակցության մասին (հոկտեմբեր):

• Աշակերտների շրջանում՝ նրանց ընդունակությունները զարգացնելու նպատակով, աշխատանք է տանում՝ բազմազան գործունեության ոլորտում (այդ թվում՝ լրացուցիչ կրթության) նրանց ներգրավելու համար (առաջին քառորդ):

• Կազմում է դասարանի դաստիարակչական աշխատանքի պլանը եւ հանձնում դաստիարակության գծով փոխտնորենին (սեպտեմբեր):

Ամենօրյա աշխատանք

• Դասամատյանում նշում է բացակայությունները

• Մանկավարժական օգնություն է ցույց տալիս՝ դասարանական եւ դպրոցական ինքնավարության օղակների, տվյալ դասարանի ներկայացուցիչների աշխատանքների կազմակերպմանը:Հետեւում է աշակերտների արտաքին տեսքի պատշաճությանը:

• Հետեւում է աշակերտների սնվելուն, եւ բարեկիրթ վարքին՝ բուֆետում, ճաշարանում:

• Հետեւում է դասարանում հերթապահության կազմակերպմանը:

Ամենշաբաթյա աշխատանք

• Աշակերտների օրագրերի ստուգում:

• Դասամատյանի վարման վերահսկողություն:

• Դասղեկական ժամի վարում

• Այլ պլանավորված աշխատանքների կատարում:

Ամենամսյա աշխատանք

• Հետեւում է դասագրքերի պահպանմանը:

• Ճշտում է իր դասարանի աշակերտների՝ լրացուցիչ կրթության օղակներում մասնակցության մասին տեղեկությունները:

• Վարում է մանկավարժական խորհրդատվություն:

• Վարում է ծնողական ժողովներ:

• Կազմակերպում է ծնողական խորհրդի աշխատանքները, համաձայն վերջինիս պլանի:

• Մասնակցում է դասղեկական մեթոդ միավորման (դմմ) սեմինարներին եւ այլ միջոցառումներին մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով:

• Կազմակերպում է ուսումնական քառորդում դասարանի կրթադաստիարակչական կենսագործունեության արդյունքների ամփոփումը:

Ուսումնական տարվա վերջում

• Կազմակերպում է դասագրքերի հանձնումը գրադարան:

• Կազմակերպում է դասարանը նորոգելու, ներկելու աշխատանքներ: